

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Արմավիրի մարզի Փարաքարի գյուղապետարանի աշխատակազմի 2013 թվականի ընթացքում կատարած աշխատանքների

I. Զաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքների բնագավառ:

2013 թվականի ընթացքում բնակիչներից ստացվել է 286 դիմում, որոնք ժամանակին պատասխանվել են:

ստացվել է 591 գրություն, որոնք ժամանակին քննարկվել և պատասխանվել են , չի պատասխանվել 1 գրության, որը գտնվում են քննարկման փուլում,

տարբեր հարցերով մասնակցել ենք 85 դատական նիստի,

վարչական պատասխանատվության է ենթարկվել 8 անձ,

կայացվել է համայնքի ղեկավարի 76 որոշում, ավագանու 9 նիստ՝ 52 որոշում,

արձակվել է 85 կարգադրություն,

աշխատակազմի քարտուղարի՝ 28 հրաման

կազմվել է թվով 11 կտակ, լիազորագիր -2

կայացվել է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 10 որոշում

տրվել է 1948 տեղեկանք,

II. Ֆինանսների բնագավառ - Փարաքար համայնքի 2013թ. ընթացքում

հավաքագրված եկամուտների վերաբերյալ հաշվետվությունը և 2012թ. նկատմամբ համեմատական վերլուծությունը

- 2013թվականի տարեկան եկամուտը առանց տարեսկզբի մնացորդի կազմում է 172 մլն. 168.888 հազ. դրամ գումար, որը կազմում է բյուջեի 96.5%-ը, 2012թ. նույն ժամանակաշրջանի եկամուտը կազմում է 185 մլն 357.61 հազ դրամ՝ այսինքն 106.3%-ը: 2013թ-ի բյուջեի կատարողականի համեմատաբար ցածր ցուցանիշը (9.8%-ը) պայմանավորված է 2013թ ֆոնդային բյուջեի եկամուտների թերակատարումից:

Փարաքար համայնքի 2013թ.-ի եկամուտների կատարողականի վերլուծությունը 2012թ-ի նկատմամբ

	2012թ.			2013թ.		
	նախատեսված	փաստ. կատարված	%	նախատեսված	փաստ. կատարված	%
1.Հարկեր և տուրքեր	81110.4	87128.151	107.42	83548.66	87566.503	104.81
Հողի հարկ	10400.0	10995.354	105.72	10400.0	11989.915	115.29
Գույքահարկ	36000.0	41307.678	114.74	39030.56	42228.191	108.19
Գույքահարկ փոխադրամիջ.	17500.0	17521.699	100.12	20000.0	19340.417	96.7
Տեղական տուրք	17210.4	17303.42	100.54	14116.1	14007.98	99.23
Նոր կառ. շինութ.	460.0	412.8	89.74	460.0	333.2	72.43
Շինութ. վերակառուց.				25.0		
Շին. քանդման	20.0	25.1	125.5	10.0	9.7	97.0
ժամը 24:00-ից հետո	8300.0	8306.1	100.07	5800.0	5770.8	99.5
ա/հաղատում	4000.0	4001.6	100.04	3000.0	2999.9	100.0
ք/Շահում. խաղեր	4000.0	4000.5	100.01	2500.0	2456.8	98.27
զ/Հանրային սննդի օբ.	300.0	304.0	101.33	300.0	314.1	104.7
Օղի և ծխախոտի վաճ.	1080.0	1088.9	100.82	840.0	845.3	100.63
Բացօթյա վաճառք.	1232.0	1265.9	102.75	1300.0	1301.6	100.12

ա/Այլ ապրանք.վաճ.	782.0	814.9	104.21	700.0	701.1	100.16
բ/Վառելիքաքսայուղ	450.0	451.0	100.22	600.0	600.5	100.08
Գովազդի թույլտվ.	6050.0	6136.12	101.42	5621.1	5687.98	101.19
Արխիվից.տրվ.փաստ.	68.4	68.5	100.15	60.0	54.5	99.0
2.պաշտոնակ. դրամաշն.	70730.56	70731.0	100.0	74624.0	74624.0	100.0
Դոտացիա	64504.0	64504.0	100.0	64349.1	64349.1	100.0
Ազգային եկագարան. գծով սուբվենցիա և եկագագույն աշխ. Էներգ.փոխհատուցում	6226.56	6227.0	100.01	5896.0 3757.9 621.0	5896.0 3753.7 621.0	100.0
3.Այլ եկամուտներ	7459.04	6267.59	84.03	7829.34	7804.309	99.68
Ինքնակամ շին. օրին. ,	2180.0	1178.164	54.04	3000.0	3419.592	113.99
Տուգանք ինքնակ. շին.		19.004		200.0	200.0	100.0
Հասցեի որոշման և բն.	460.0	288.8	62.78	300.0	319.0	106.33
Վարձակ. հողի և գույքի վճար	950.0	1120.522	117.95	1070.0	1132.117	105.8
Տեղական վճար	3869.04	3661.1	94.63	3259.34	2733.6	83.87
ն/թ.Աղբահանություն	2989.040	2957.1	98.93	2859.34	2389.8	83.58
Ընդ. վարչ. բյուջե	159300.0	164126.741	103.03	166000.0	169994.812	102.41
Հողի օտար. եկամ.	15011.475	21230.87	141.43	10937.5	674.076	6.16
Այլ եկամուտներ				1500.0	1500.0	100
Ֆ/բ ազատ մնաց.	8388.525	8388.525	100.0	22405.4	22405.4	100.0
Ընդ. ֆոնդ. բյուջե	23400.0	29619.395	126.58	34842.9	24579.48	70.54
Ընդամենը	182700.0	193746.136	106.05	200842.9	194574.289	96.88
գուտ եկամուտ	111969.425	123015.136	109.86	124718.9	118450.289	94.97
ընդ. եկամուտ առանց տ/ս. ազատ մնացորդի	103580.9	114626.611	63.2	102313.5	96044.889	93.87

ՓԱՐԱՔԱՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾԱՆՍԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՈՍՏ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՂԱՍԱԿԱՐԳՄԱՆ և 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆԿԱՏԱՄԲ ՀԱՍԵՄԱՏԱԿԱՆ

2013 թվականի ընթացքում կատարվել է ծախսեր 187 մլն 938.2 հազ դրամ , 2012թ նույն ժամանակահատվածում կատարվել է ծախսեր 171 մլն 340.73 հազ.դրամ, ավել ծախս է կատարվել 16 մլն 597.46 հազ.դրամով, որը բացատրվում է տարեսկզբի մնացորդի հաշվին կատարված ծախսերով:

N	Ծախսերի անվանումը	2012թ			2013թ		
		պլան	փաստ. կատարված	կատար %	պլան	փաստ. կատարված	կատար %
Խ ռ ւ ը ր	Ե Ն Թ ա խ ու մ ք	Հազ.		դրամ	Հազ.		դրամ
1	Վաչական բյուջե ընդամենը	159300.0	154396.493	96.9	166000.0	163504.482	98.5
1	Տեղական ինքնակառավարում	46892.8	45232.063	96.5	46380.1	45512.6	98.1
2	Համայնքային այլ ծառայություն	585.1	585.1	100.0	285.1	285.1	100.0

4	Կրթություն և գիտություն	62026.6	62026.6	100.0	69609.0	69085.0	99.2
5	Սոցիալական ապահովություն	11500.0	11469.61	99.7	8450.0	8440.45	99.9
6	Մշակույթ, սպորտ և կրոն	7950.0	7059.902	88.8	8648.3	8092.12	93.6
7	Բնակվոմունալ տնտեսություն	30345.5	28023.258	92.3	32627.5	32089.251	98.4
7.1	Սան մարդում	15378.1	15378.1	100.0	16631.457	16450.737	98.9
7.2	Այլ ծախսեր	14967.4	12645.1	84.5	15996.04 3	15638.514	97.8
8	Գյուղատնտեսություն	0	0	0	0	0	0
	Պահուստային ֆոնդ	0.0	0		0.0	0	
II	Ֆոնդային բյուջե	23400.0	16944.242	72.4	34842.9	24433.71	70.1
1	Շենքերի և շինությունների կառուցում	0	0	0	0	0	0
2	Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	8300.0	7851.6	94.6	8700.0	6501.5	74.7
3	Վարչական սարքավորումների ձեռք բերման ծախսեր	4000.0	3992.79	99.8	5500.0	2386.0	43.4
4	Նյութեր և պարագաների ձեռք բերման ծախսեր	1034.1	1033.952	99.98	4242.9	3146.2	74.2
6	Ոչ նյութական հիմնական միջոցներ	100	100.0	100.0	100.0	100.0	100.0
7	Տրանսպորտ, միջոցների ձեռք բերում	6000.0	0.0	0.0	12300.0	12300.0	100.0
8	Հողի ձեռք բերման ծախսեր	3965.9	3965.9	100.0	4000.0	0	0
I+II	Ընդամենը ծախսեր	182700.0	171340.73	93.8	200842.9	187938.192	93.6

Փարաքար համայնքի 2013թ. ընթացքում
կատարած ծախսերի վերաբերյալ հաշվետվություն

ա/ Գյուղապետարանի աշխատակազմի պահպանման համար 2013 թվականի ընթացքում կատարվել է ծախսեր 58 մլն 698.564 հազ.դրամ, որից աշխատավարձ՝ 35 մլն 517.993 հազ. դրամ, պարգևատրումներ 3մլն.դրամ, կատարվել է էներգետիկ, կոմունալ և կապի ծառայությունների դիմաց ծախսեր 1մլն.349.345 հազ.դրամ, ապահովագրական ծախսեր՝ 193.110 հազ.դրամ, կատարվել է զործուղման ծախս 301.0 հազ.դրամ, կատարվել է համակարգչային և տեղեկատվական ծառայությունների դիմաց ծախսեր 673.850 հազ. դրամ, կատարվել է ներկայացուցչական ծախսեր 220.0 հազ.դրամ, ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 2 մլն. 36.632 հազ.դրամի : Մասնագիտական ծառայությունների գծով կատարվել է ծախս 189.830 հազ.դրամ՝ /ՀայՌուսգազարդին, ԷյԲՄԻ-Դոմենին/: Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում հողվածով կատարվել է ծախս 325.6 հազ.դրամի/Փարաքար համայնքի կեդոաջրերի հեռացման կայանի պոմպի ընթացիկ վերանորոգման համար 159.6 հազ.դրամ, Երուզապետարանի թվով 13 համակարգիչների փոշեմաքրման և էլ սնուցման կարգավորիչների վերանորոգման աշխատանքների համար կատարվել է ծախս 66.0 հազ.դրամ, քարթրիջների լիցքավորում՝ 100.0հազ.դրամ/ ձեռք է բերվել զրեռական պիտույքներ 100.0հազ.դրամի, ձեռք է բերվել տրանսպորտային նյութեր՝ 1մլն.358.850 հազ.դրամ, կենցաղային մաքրիչ նյութեր՝ 50.0հազ.դրամ, փոխանցվել է պարտադիր վճարներ՝ 196.354 հազ. դրամ /դատական ծախսեր և պետական տուրքեր/, ձեռք է բերվել ծառայողական ավտոմեքենա 12մլն 300.0 հազ.դրամի, ձեռք է բերվել բիոլճակի համար պոմպ իր սարքավորումներով 536.2 հազ.դրամի, Հիմնական դպրոցի համար զազահաշվիչ իր արկղով՝ 147.0հազ.դրամ, բջջային հեռախոս՝ 202.8հազ.դրամ:

բ/ Ընդհանուր բնույթի այլ ծառայությունների գծով կատարվել է ծախսեր 285.1 հազ.դրամ 200.0 հազ դրամ տրվել է Փարաքարի բուժ.ամբուլատորիաներին՝ կանանց և հղիների սպասարկման ծառայությունների դիմաց, 85.1 հազ.դրամ Համայնքների միությանը որպես անդամավճար:

գ/ Սոց օգնությունների գծով ծախսեր է կատարվել 8 մլն 440.450 հազ.դրամի: Թվով 157 ընտանիքի արվել է դրամական օգնություն, որից 3 մլն. 656.5 հազ.դրամը վճարվել է դժբախտության մեջ հայտնված 71 ընտանիքների, համայնքում 1-ին երեխա ծնված 28 ընտանիքի վճարվել է 1 մլն. 442.0 հազ.դրամ, Հիմնական դպրոցի ավտոլթարից տուժած 19 աշխատակիցներին վճարվել է 947.6 հազ դրամ, հրդեհից տուժած 1 ընտանիքի 61.8 հազ դրամ, վճարվել է անսպասելի Ձարգանդ Գևորգյանին 51.5 հազ դրամ, վճարվել է ՀՄՊ 1 վետերանի 70 հազ դրամ, և թիկունքում ծառայած 5 մասնակցի տրվել է 206.0 հազ.դրամ, Չերնոբիլի 5 մասնակիցների տրվել է 206.0 հազ.դրամ: Արցախյան պատերազմում զոհված 3 ազատամարտիկների ընտանիքներին 120.0 հազ.դրամ, և Արցախյան պատերազմում վիրավորված 8 մասնակիցների 206.0 հազ. դրամ. 20 անսպասելի ընտանիքների վճարվել է 525.3 հազ.դրամ, փոխանցվել է բարեգործական համերգի տոմսերի համար 25.0 հազ դրամ և կարկուտից տուժած համայնքներին օգնություն 1 մլն. դրամ:

դ/ Այլ մշակույթային կազմակերպությունների գծով կատարվել է ծախսեր 9 մլն 169.117 հազ.դրամ, որից աշխատավարձ 6 մլն 3.360 հազ.դրամ, Էներգետիկ ծառայություններ 700.680 հազ.դրամ, կենցաղային և հանրային սննդի ծառայություններ՝ 300.0 հազ.դրամ, կազմակերպվել է միջոցառումներ երիտասարդական ծրագրերի միջոցով՝ 381.6 հազ.դրամ, կատարվել է մասնագիտական ծառայությունների գծով կատարվել է զազասպասարկման ծախս 23.477 հազ.դրամ .ձեռք է բերվել տոնածառի լոյսեր և խաղալիքներ՝ 60.0 հազ.դրամ, Թախրովի գրադարանի համար ձեռք է բերվել գեղարվեստական զրականություն 50.0 հազ.դրամի, «Թիթեռնիկ» պարային հանույթի տարագ ձեռք բերելու համար փոխանցվել է 1 մլն. 500.0 հազ դրամ :

ե/ Սպորտ միջոցառումների գծով կատարվել է ծախս 523.0 հազ.դրամ. որից գործուղման ծախսեր 373.0 հազ.դրամ / Վանաձոր և Ալմալիք մշակույթային մրցույթ փառատունին մասնակցելու համար 100.0 հազ.դրամ, վճարված է օրապահիկ շախմատի առաջնության անցկացման համար 30.0 հազ դրամ, տրվել է ք. Գյումրի լոնցքամարտի բաց առաջնության անցկացման համար 41.6 հազ.դրամ, վճարվել է 36.0 հազ.դրամ օրապահիկ համայնքի դպրոցականների ֆուտբոլի առաջնություն անցկացնելու համար, վճարվել է Արմավիրի մարզում շախմատի առաջնություն անցկացնելու համար 21.0 հազ.դրամ, վճարվել է ք.Վայքի 55 անյակին նվիրված բոն ցքամարտի առաջնություն անցկացման համար 36.0 հազ.դրամ, ք.Ելևան շախմատի սրակավորման մրցաշարին մասնակցելու համար 88.4 հազ.դրամ, Կոտայքի մարզի գ.Զովունիում բոնցքամարտի մրցումների համար 20.0 հազ.դրամ/: Համայնքի դպրոցականների ֆուտբոլի և նարդու և շախմատի առաջնության մասնակիցներին տրվել է նվերներ 150.0 հազ.դրամ:

զ/ «Բարեկարգում» տնօրինության միջոցով կատարված ծախսը կազմում է՝ 41 մլն 736.961 հազ . դրամ, որից աշխատավարձ՝ 20 մլն 812.026 հազ.դրամ: Կատարվել է Էներգետիկ ծառայությունների դիմաց ծախսեր 852.641 հազ.դրամ, կատարվել է խմելու ջրի վարձ 687.325 հազ.դրամ, աղբավայրի վճար 1 մլն.500.0 հազ.դրամ, փոխանցվել է աղբատար մեքենայի վարձակալության համար 650.0 հազ.դրամ, ավտոմեքենայի տեխնիկական զննում 16.0 հազ.դրամ, ջրահեռացման ցանցի մաքրում 72.0 հազ.դրամ, Փար աքարի կոյուղագծերի վերանորոգում՝ և մաքրման աշխատանքների համար՝ 718.0 հազ.դրամ, Հիմնական դպրոցի զազաֆիկացման աշխատանքների համար 52.91 հազ.դրամ և զազի խողովակների համար 45.0 հազ.դրամ, Սպորտ դպրոցի տանիքի վերանորոգման համար աշխատավարձ՝ 736.0 հազ.դրամ, Բիոլճակի էլ.ենթակայանի վերանորոգման համար 42.8 հազ.դրամ, Յորդ մեքենայի տեխնիկական սպասարկման և վերանորոգման համար կատարվել է ծախս 462.0 հազ.դրամ, աղբատար մեքենաների վերանորոգման համար ծախսվել է 796.5

հազ.դրամ,բեռնատար և Ֆոյդ մեքենաների մարտկոցներ 79.2 հազ.դրամ, աղբահանության համար վառելիք /գազի/ ձեռք բերման համար կտուարվել է ծախս 3մլն.598.8 հազ.դրամ, ձեռք է բերվել 3 անվարող 336.0 հազ.դրամ, ձեռք է բերվել գրենական պիտույքներ 100.0 հազ.դրամ, գերեզմանների մոտակայքի առվի վերանորոգման համար ձեռք է բերվել շինարարական կյութեր 63.0հազ.դրամի, ձեռք է բերվել սպորտ դպրոցի տանիքի համար շինարարական կյութեր և ապրանքներ՝ 2 մլն 598.6 հազ.դրամ, ձեռք է բերվել շինարարական կյութեր և էլ.լուսավորության համար մալուխներ 270.860 հազ.դրամի համայնքի 5 փողոցների համար, կատարվել է 707 քառ.մ ասֆալտաբետոնե ծածկի փոսային վերանորոգման աշխատանքներ 4 մլն.574.461 դրամ Նաիրի, Ի.Գասպարյան և Վ.Մամիկոնյան փողոցներում, անց է կացվել գազաֆիկացում համայնքի 3 փողոցներում 1 մլն.926.605 հազ.դրամ, ձեռք է բերվել ՊՎՔ խողովակներ համայնքի կոյուղագծերի վերանորոգման համար՝ 278.438 դրամ,ձեռք է բերվել խմելու ջրի ջրագծերի վերանորոգման համար՝ 153.942 դրամի խողովակներ, կատարվել է Թախրովի միջնակարգ դպրոցի զին.սենյակի պատուհանների ճաղապատում 236.4 հազ.դրամի

Է/ Փարաքարի մանկապարտեզին փոխանցվել է սուբսիդիա 22 մլն.276.0հազ.դրամ և նպատակային հատկացում 316.0 հազ.դրամ. Թախրովի մանկապարտեզին՝ 15 մլն 160.0հազ. դրամ սուբսիդիա և 195.5 հազ.դրամ նպատակային հատկացում, սրվետտի դպրոցին՝ 22մլն դրամ սուբսիդիա և ազգային նվազարանների արև.ճար ուսուցման համար հատկացվել է ընթացիկ դրամաշնորհներ 5 մլն 896.0 հազ.դրամի և նպատակային հատկացում՝ 3 մլն.241.5 հազ.դրամ.

III. Պաշտպանության բնագավառ

Հաշվետու ժամանակահատվածում համայնքի 16- 50 տարեկան զինապարտների գրանցամատյաններում ավարտվել են ճշման աշխատանքները, տվյալները համապատասխանեցվել են Էջմիածնի զինվորական կոմիսարիատի տվյալների հետ:

Համայնքի ղեկավարի 01.06.2013 թ. թիվ 48-Ս որոշմամբ հաստատվել է համայնքի զորահավաքային պլանը, իսկ 03.06.2013 թ. թիվ 49-Ս որոշմամբ՝ ստեղծվել է համայնքի զորահավաքային մարմինը: Հունվարի 28-ին բանակի կազմավորման օրվան և մայիսի 9-ին հաղթանակի օրվան նվիրված միջոցառումների ժամանակ արցախյան պատերազմի ազատամարտիկները և ՀՄՊ –ի վետերանը մեծարվել են և ստացել դրամական պարգևներ:

Փետրվարին 60 նախագորակոչային տարիքի անձիք մասնակցել են բժշկական ստուգման և վերցվել՝ հաշվառման: 54 պատանիներ զորակոչվել են Հայկական բանակ: 12 պահեստային զինծառայողներ /շարքայիններ, սպաներ/ մասնակցել են կազմակերպված զորավարժանքներին:

IV. Քաղաքաշինություն և հողօգտագործման բնագավառ

- Կառուցապատողներին տրվել է 22 ճարտարապետահատակագծային ստաշտդքներ, որից 3-ը համաձայնեցվել է մարզպետարանի և Քաղաքաշինության նախարարության հետ:
- Համաձայնեցվել է 31 նախագիծ:
- Տրվել է 24 շինարարության թույլտվություն, որից
17 -ը՝ նոր կառուցվող բնակելի տան,
1-ը՝ միջին ճնշման գազատարի,
1-ը՝ անհատական բնակելի տան վերակառուցման,
2-ը՝ անասնագուրի,
1-ը՝ ավտոտանակի,
1-ը՝ վարչատնտեսական շինության,
1-ը՝ առևտրի և սպասարկման օբյեկտի:
- Տրվել է ավարտված շինարարությունների շահագործման փաստագրման 9 ակտ

1-ը՝ հասարակական սննդի օբյեկտի,

7-ը՝ բնակելի տան,

1-ը՝ օժանդակ շինության,

- Կայացվել է հողի գործառական նշանակության փոփոխության 6 որոշում,
- Կայացվել է շինության գործառական նշանակության փոփոխության 4 որոշում,
- Կայացվել է ինքնակամ շինությունների օրինականացման 7 որոշում,
- Ինքնակամ կառուցվող շինությունը և զբաղեցրած հողամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին 2 որոշում.
- Հողի նպատակային նշանակության փոփոխության 1 որոշում:
- Կասեցվել է 5 ինքնակամ շինարարություն,
- Կայացվել է գույքային իրավունքների վերականգնման 15 որոշում
- Պարբերաբար տեղեկատվություն է ներկայացվել Արմավիրի մարզպետարան,
- Քաղաքաշինության նախարարություն, Քաղաքաշինական պետական տեսչություն, ԱԳ Կադաստրի պետական կոմիտե, Արտակարգ իրավիճակների նախարարություն, Վիճակագրական վարչություն և այլ պետական կառույցներ:
- Ավարտվել են Փարաքարի համայնքի կեղտաջրերի հեռացման կոլեկտորի և բիոլոգիական մաքրման լճակների շինարարական աշխատանքները, կատարվում են շահագործման փորձարկման աշխատանքներ:
- Կատարվել են Փարաքարի մշակույթի տան հարակից այգու բարեկարգման աշխատանքները:
- Կազմվել է 17 իրավիճակային հատակագիծ:
- Տրվել է հասցեների ճշտման և նոր հասցեների տրամադրման 18 որոշում:
- Սարգսետարան է ներկայացվել համայնքի հողային ֆոնդի առկայության, բաշխման և ոռոգվող հողերի առկայության վերաբերյալ հաշվետվություններ:

V. Բարեկարգման և կոմունալ տնտեսության բնագավառ

2013 թվականի ընթացքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

Կատարվել է Թախրով գյուղի 4-րդ և 5-րդ շենքերի կոյուղագծերի վերանորոգման աշխատանքները, Թախրովի մարզադպրոցի ֆուտբոլի դաշտասանների պատրաստումը, ձեռք է բերվել Փարաքարի սպորտ դպրոցի տանիքի վերանորոգման համար անհրաժեշտ շինարարական կոյուղեր: Վերանորոգման աշխատանքները ավարտվել են:

Ձեռք են բերվել կոյուղագծի պլաստմասե խողովակներ:

Վերանորոգվել է մաքրման կայանի պոմպը, ձեռք է բերվել նաև նոր պոմպ և դրա աշխատանքն ապահովող սարքավորումներ:

„Երևան- ջուր„ ՓԲԸ –ի հետ համատեղ վերանորոգվել և մասնակի փոխվել է համայնքի Ռ.Արշակյան և Վ.Սարգսյան Է-ին փողոցի ջրի ներքին ցանցի վնասված հատվածները:

Կատարվել է Նաիրի, Բ.Գասպարյան, Վ.Մամիկոնյան փողոցների ասֆալտե ծածկի փոսային վերանորոգման աշխատանքները:

Մաքրվել է Մայրաքաղաքային, Երևանյան, Բ.Գասպարյան փողոցները, կատարվել է ծառերի բների պվաակեցում և էտ:

Ճաղավանդակներ է դրվել Թախրովի միջնակարգ դպրոցի ռազմագիտության սենյակի համար:

Կառուցվել է Փարաքար գյուղի Կուխուսի Երիտասարդական և Վաղարշապատի փողոցների միջին ճնշման մագիստրալ գծը, վերականգնվել է Ջիվանու, Անդրանիկի, Այգեստան, Իսահակյան փողոցների գիշերային լուսավորությունը:

Բազմիցս մաքրվել է Նաիրի փողոցի կոյուղագլիծը:

VI. Առևտրի և սպասարկման բնագավառ,

Ա. Համաձայն առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության կանոնների, իրականացվում է այդ ոլորտի գործունեությունը. Տարվա ընթացքում տրամադրվել է 46 թույլտվություն համայնքի տարածքում ոգելից խմիչքների, ծխախոտի վաճառքի համար, 6 թույլտվություն, բացօթյա վաճառք կազմակերպելու համար, 8 թույլտվություն՝ ժամը 24⁰⁰-ից հետո աշխատելու համար (խաղատուն – 3, խաղասրահ- 7)

արտաքին գովազդի տեղադրման համար տրվել է 35 թույլտվություն:

Բ. „Առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների,, ոլորտում իրականացվում է հսկողություն և պահպանողականություններն են.

- Հաշվետու ժամանակաշրջանում գործող օբյեկտների քանակը
Առևտրի -60
Հանրային -21, որից 14-ը ռեստորան
Կենցաղային ծառայություն- 17
- Ստուգված օբյեկտների քանակը
Առևտրի -31
Հանրային -8
Կենցաղային ծառայություն- 11
Արձանագրված խախտումներ չկան:

VII. Առողջապահության բնագավառ

<<Փարապրի ԲԱ>>-ն սպասարկում է 5368 բնակիչ, որից 0-18 տարեկան՝ 1428 երեխա, 18 տարեկան և բարձր տարիքի՝ 3940 բնակիչ: Ամբուլատորիայի ֆինանսավորումը կատարվում է ՀՀ առողջապահության պետական գործակալության կողմից, որը 2013 թվականի համար կազմել է 19 մլն.491,3 դրամ: Ամբուլատորիայում հաշվառված են 165 հաշմանդամության խումբ ունեցող անձինք, ՀՄՊ, Արցախյան պատերազմի և Չեռնոբիլի 25 մասնակից: 2013 թվականին ամբուլատորիայում կատարվել է 12072 հաճախում: 2013 թվականին կատարվել է 1349 տեսչի այց, ստացիոնար և ուղեգրվել 135 հիվանդ: Արձանագրվել է 51 մահ: Ամբուլատորիայում կատարվել է 277 էՍԳ (էլեկտրասրտագրություն), 409 գլյուկոմետրիա, 571 արյան և 411 մեզի ընդհանուր քննություն: Տարվա ընթացքում ըստ անհրաժեշտության բնակիչներին տրամադրվել են ուղեգրեր նեղ մասնագիտական խորհրդատվության և լաբորատոր գործիքային հետազոտությունների համար: 2013 թվականին անվճար և արտոնյալ պայմաններով 2235512 դրամի դեդուկցիա է տրամադրվել բնակչությանը: 2013 թ.եկրորդ կիսամյակի ֆինանսավորումը կազմել է 985200 դրամ: <<Փարապրի ԲԱ>>-ում ամբողջ տարվա ընթացքում հաշվառվել է 16 հոլի: Տարեկան ծնված երեխաների թիվը՝ 87: Ամբուլատորիայում կատարվել է 657 պրոֆ. պատվաստում:

Թաիրովի Բ/Ա-ն սպասարկում է 747 0-18տ. երեխաներ և 2206 մեծահասակ:

2013թ. ընթացքում ամբուլատորիա են հաճախել բժիշկներին /ներառյալ կանխարգելիչ քննությի/՝ 4767 բնակիչ, կատարվել է 89 տեսչի կանչ:

Ընտանեկան բժշկի կողմից կատարվել է 438 ուղեգրումներ նեղ մասնագետներին:

Հաշվառվել և բժշկական սպասարկում են ստացել 22 հոլի:

Ամբուլատորիայում կատարվել են լաբորատոր քննություններ՝ 1295

էլեկտրասրտագրություն -197

Սոցիալապես անապահով, հատուկ խմբերին հատկացվել է 1.077.426 դրամի դեդուկցիա, 0-18տ. երեխաներին՝ 139.930 դրամի:

90 հիվանդ գտնվում է դիալիզիսի և քրոնիկական սրտային զննման դեդուկցիայի դեդուկցիայի և ինսուլին:

223 երեխա ստացել են պրոֆիլակտիկ պատվաստումներ՝ ըստ տարիքային խմբերի և

94 մեծահասակներ: Բոլոր դպրոցահասակ երեխաները ենթարկվել են բժշկական

զննման:

Բժշկական գործունեությունը իրականացվում է հարմարավետ շենքում, որը հագեցած է բժշկական սարքավորումներով և վերապատրաստում անցած կադրերով:

VIII. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառ

Հաշվետու ժամանակահատվածում համայնքում գործել են շախմատի, մինի-ֆուտբոլի, սեդանի թենիսի, սուսլոտյան վազբի և բոնցքամարտի խմբակները, որոնց մասնակցել են շուրջ 95 երեխաներ:

Մասնակցել ենք մայրապին և հանրապետական մակարդակի մրցաշարերի: Շախմատիստները շախմատի ակադեմիայում մասնակցել են որակավորման մրցումների: Մարտ ամսին մասնակցել են մարզի շախմատի առաջնությանը, որտեղ հնդատ Կշտոյանը զբաղեցրել է մրցանակային տեղ: Բոնցքամարտիկները մասնակցել են մի շարք մրցաշարերի, այդ թվում նաև դպրոցականների և մեծահասակների առաջնություններին:

Մարտ ամսին երեք փուլերով անցկացվել է դպրոցականների շախմատի զավաթի խաղարկություն, որին մասնակցել է շուրջ 50 դպրոցական, հաղթող է ճանաչվել Փարաքարի միջնակարգ դպրոցը: Նաև հինգ տարիքային խմբերում անցկացվել է դպրոցականների ֆուտբոլի առաջնություն: Ընդհանուր սյուրուեցում հաղթող է ճանաչվել Թաիրովի միջնակարգ դպրոցը: Փարաքարի մշակույթի տանը գործող շախմատի ակադեմիայի մասնաճյուղ է հաճախում 35 պատանի շախմատիստ: Սեպտեմբեր ամսին անցկացվել է Փարաքար գյուղի օրվան նվիրված սկզբնական թենիսի և նարդու անհատական առաջնություններ: Սեդանի թենիսի մրցաշարով հաղթող ճանաչվել Արսեն Ղարիբյանը, իսկ նարդու մրցաշարի հաղթող՝ Սուրբիկ Ղարիբյանը:

Մշակույթի տանը գործող շախմատի ակադեմիայի մասնաճյուղի սաների մասնակցությունն է ապահովվել Շախմատի տանը և Շախմատի ակադեմիայում անցկացվող մրցաշարերին, որտեղ երրորդ կարգի նորմաներ են լրացրել 3 շախմատիստ, երկրորդ կարգ՝ 3 շախմատիստ:

Ձեռք են բերվել նվերներ՝ մրցաշարերի հաղթողներին պարգևատրելու համար:

Բոնցքամարտի խմբակի սաները տալիս են ընթացքում մասնակցել է բազմաթիվ մրցաշարերի:

Մարտին Երևան քաղաքում անցկացվող Հայաստանի Հանրապետության երիտասարդների առաջնությանը, մայիսին Հայաստանի Հանրապետության դեմահասների առաջնությանը, հունիսին Վ.Մկրտչյանի կիշատակին նվիրված միջազգային մրցաշարին, որտեղ նարեկ Մյաննյանը արժանացել է երրորդ մրցանակի, հոկտեմբերին Ջովուհիում անցկացված հուշամրցաշարին, որտեղ Արթուր Գուստյանը արժանացել է առաջին մրցանակի, Հարություն Ղարիբյանը և Էմիլ Հովհաննիսյանը՝ երկրորդ, նոյեմբերին Երևան քաղաքի դպրոցականների առաջնությանը, որտեղ Հարություն Ղարիբյանը զբաղեցրել է առաջին, իսկ Կարոս Մարգարյանը՝ երկրորդ մրցանակային տեղեր:

IX. Նախադպրոցական հիմնարկներ

- մանկապարտեզներում կազմակերպվել են ցերեկույթներ՝ մայրության, գարնան գալու և գատիկի տոնին նվիրված

- հունիսի 1-ը՝ երեխաների պաշտպանության միջազգային օրը, հրավիրվել էին մուլտ. հերոսներ, նրանք զվարճացրեցին երեխաներին, մանկապարտեզի բակում կազմակերպվեց տանախմբություն, անցկացվեցին հետաքրքիր խաղեր:

- հունիսի 27-ին և 28-ին Փարաքար համայնքի մանկապարտեզներում անցկացվեց „Հրաժեշտ մանկապարտեզին“, միջոցառումը երեխաներին տրվեցին նվերներ, գրենական պիտույքներ, ավարտական վկայականներ և հուշապոստներ/վիճետկա/, ինչպես նաև ամբողջ տարիների ընթացքում կատարած ձեռքի աշխատանքները: Սաներից 90-ը պատրաստվում

- Է գնալ դպրոց: Հրավիրվել էին հերոսներ, ակորդիոններ, միջոցառումից հետո երեխաները հյուրասիրվեցին: Հանդեսի կազմակերպիչները իրախոսակեցին դրամական պարզեներով
- կազմակերպվել են բաց պարաօլիմպիկներ: Ճնորհի ներկայությամբ,
- խմբերի միջև կազմակերպվել են նկարչական մրցույթներ.
- երեխաները իրենց ծնողների հետ գնացել են մանկական երկաթուղի, մանկական սրճարան,
- ավագ խմբի երեխաները այցելել են Մայր տաճար, սնցկացվել է աշնան հանդեսը, Մանկապարտեզների աշխատակիցները անցել են բուժ.գնում:
- Վերանորոգվել է Թախրովի մանկապարտեզի խոհանոցը. ձեռք է բերվել 2 պատուհան, Փարաքարի մանկապարտեզում փոխվել են 8 պատուհանները:

X. Արվեստի և մշակույթի բնագավառ

ՓԱՐԱՔԱՐԻ «ՀՈՎԻԿ ԷՐԳԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴԳՐՈՑ» ՀՈԱԿ-Ի 2013 ԹՎԱԿԱՆԻ ԿՐԱՏԱՐԱԾ ԱՃԽԱՏԱՆՔՆԵՐԸ

- 13.02.2013թ. – Համերգ նվիրված Տեառնընդարձացին
- 16.02.2013թ. – Մասնակցություն «Art Expo» միջհամայնքային փառատոնին («Լավագույն Մշակութային համայնք» - առաջին մրցանակ, իսկ 2011թ. «Լավագույն Մշակութային դպրոց առաջին մրցանակ)
- 19.02.2013թ. – «Կաստանետ» սպորտային պարերի բաց առաջնություն (մեկ առաջին, երկու, երկու երրորդ, մեկ չորրորդ մրցանակ)
- 14.03.2013թ. – Միջազգային ցուցահանդես Չեխիայի Էլիզեթ քաղաքում (10 մասնակից)
- 28.03.2013թ. – Համերգ Առաջին հնչյունաբայեր և վրձնաբայեր (55 մասնակիցների նվերներ)
- 07.04.2013թ. – Համերգ նվիրված Գեղեցկության և մայրության տոնին
- 07.04.2013թ. – Սպորտային պարերի միջազգային մրցույթ Ուկրաինայում (երկրորդ մրցանակ)
- 09-18.04.2013թ. – Գյուլերի- «Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոն (6 մասնակից)
 - Երկրորդ մրցանակ – ուղ
 - Երրորդ մրցանակ – ըստանշա
 - Երրորդ մրցանակ – ջութակ
 - Հանդիսատեսի համակրանք – գաջնամուր
 - Երկու շնորհակալագիր – վոկալ
- 18.04.2013թ. – Մարզային շրջիկ ցուցահանդես (Արշալույսի ԱԴ, Փարաքարի ԱԴ)
- 24.04.2013թ. – Հուշ-երեկո նվիրված Մեծ Եղեռնի տարեյիցին
- 29.04.2013թ. – Միջազգային ցուցահանդես Լեհաստանի Տորուն քաղաքում (16 մասնակից)
- 09.05.2013թ. – Համերգ ՀՄՊ Հաղթանակի և Եռօշիի օրվան
- 10.05.2013թ. – Ժողովրդական արտիստ Սվետլանա Նավասարդյանի համերգ- հանդիպում
- 17.05.2013թ. – Համերգ Իսահակյանի տուն-թանգարանում
- 01.06.2013թ. – Ցուցահանդես մրցույթ նկարներ սոֆալտի վրա
- 01.06.2013թ. – Համերգ նվիրված երեխաների պաշտպանության օրվան
- 02.06.2013թ. – Փողային նվագախմբերի հանրապետական փառատոն Վանաձորում
- 15.06.2013թ. – Գինու տոն Փարաքարում
- 20.06.2013թ. – հաշվետու համերգ
- 15-25.07.2013թ. – Ամառային հանգիստ Լուսաբլուրի անտառի բացատում «Մուկետիկ» հասարակական մշակութային կազմակերպության և Արտ-խեցի Արտ-գեղանկարչություն տարատեսակների սիմպոզիում (20 աշակերտ):
- 20.07.2013թ. – համերգ Լուսաբլուրում
- 15.08.2013թ. – համերգ Սուրբ Աստվածածին եկեղեցում (խաղողօրհներ):
- 28.08.2013թ. – Գինու փառատոն Փարաքարում
- 02.09.2013թ. – Փարաքարի հիմնական դպրոցում «Գիտելիքի օր» միջոցառում

- 06.10.2013թ. - 6-րդ համահայկական նկարչական մրցույթ կենդանաբանական այգու մ:
- 18.10.2013թ. - Ավանդական երգ ու պարի վառատուն Երևանի պոլիտեխնիկ ինստիտուտում:
- 27.10.2013թ. - «Կենդանիների դիմակահանդես շքերթ» Երևանում «Պահպանիր կենդանիների իրավունքները» խորագրով
- Փողային նվագախմբի և դիռլահարների մրցույթ-վառատուն
- 15.11.2013թ. - «Եզրայտուար իմ աչքերով» միջազգային ցուցահանդես-մրցույթ (10 մասնակից)
- 15.11.2013թ. - Երևանի պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, քանոնահարուհի Շովինար Հովհաննիսյանի դասարանական համերգ
- 05.12.2013թ. - «Արտոմ Խաչատրյան-110» համերգ-գրույց
- 25.12.2013թ. - Տոնական համերգ նվիրված Ամանորին և Սուրբ Ծննդյան տոներին:

XI. 2013 թ ընթացքում կազմակերպված միջոցառումները

Միլոուքի նախարարության հետ համագործակցության արդյունքում ամեն տարի մեր համայնքը ընդունում է «Արի տուն» ծրագրով հայրենյալ ժամանած սփյուռքահայ երիտասարդների: Այս տարի ևս հուլիս ամսին համայնքի ընտանիքները իրենց հարկի տակ ընդունեցին 18 պատանիներ, որոնք 14 օր շարունակ ապրեցին հայ ընտանիքներում, վայելեցին փարաքարցիների ջերմ ընդունելությունը և հյուրասիրությունը: Հուլիս-օգոստոս ամիսներին Փարաքարի և Թաիրովի մշակույթի տներում գործել են բակային ճամբարներ, յուրաքանչյուր հերթափոխին մասնակցել է մոտ 100 երեխա: Ճամբարի ընթացքում երեխաների համայն կազմակերպվել են բազմաթիվ ինտելեկտուալ մրցույթներ, խաղեր, ունեցել են անզերեկի, հայերենի դասաժամեր, սովորել են երգել, ասմունքել և պարել:

2013 թվականի ընթացքում երկարայ անգամ կազմակերպվեց «Փարաքարի գինու տոնավաճառ» փառատոն, ուր ներկայացվել էին ինչպես համայնքի բնակիչների տնային պայմաններում պատրաստված, այնպես էլ գինու գործարանների արտադրանքներ:

Օգոստոսին Սուրբ Աստվածածին եկեղեցում անցկացվեց Աստվածածնի վերափոխման կամ խաղողօրհների արարողու այրուը: Բնակչությանը մատուցվեց մասալ:

Օգոստոս ամսին Փարաքարի մշակույթի տան «Թիթեռնիկներ» համույթը մասնակցեց Ռումինիայի հանրապետության Տոլցեա քաղաքում անցկացվող «Ռուկե Ձկնիկ» միջազգային փառատոնին և զբաղեցրեց պատվավոր 2-րդ տեղը:

Մեպտեմբերի 2-ին մեծ տոնախմբություն կազմակերպվեց հիմնական դպրոցի բակում: Նշվում էր ուսումնական տարվա սկիզբը և «Իտեղիքի օրը»: Բուլբոլ հուզված էին, քանի որ օգոստոսի 23-ին դպրոցի ամբողջ կուկելտիվը ավտովթարի էր ենթարկվել, մանկավարժների մեծ մասը դեռ գտնվում էին հիվանդանոցներում, ով ի վիճակի էր եկել էր դպրոց: Մեծ աջակցություն հիմնական դպրոցին ցուցաբերեցին գյուղապետարանի աշխատակիցները և բնակիչները, որոնց ջանքերով կայացավ ուսումնական տարվա սկիզբը:

Մեպտեմբեր ամսին նշվեց Փարաքար գյուղի 2202-ամյակը: Միջոցառմանը մասնակցեցին համայնքի մանկապարտեզի, հանրակրթական դպրոցների, բուժ. ամբուլատորիայի, արվեստի դպրոցի կուկելտիվները և սաները: Նաև իրենց ակտիվ մասնակցությունը ունեցան համայնքի բնակիչները: Միջոցառմանը համերգային ծրագրով ելույթ ունեցան արվեստի դպրոցի սաները, «Թիթեռնիկներ», «Փարվանա» և «Ջրիվան» պարային խմբերը, ինչպես նաև Բեղգիայի «Լիմբրանտ» ակումդական կրաժշտության համույթը:

Հոկտեմբեր ամսին Թաիրովի մշակույթի տանը հանդիսավոր նշվեց Ռուսոյի և Գրադարանավայի օրերը: Միջոցառմանը ներկա էին հյուրեր՝ Տիգրան Ներսիսյանը, Նելի Խերանյանը, Լալա Մնացականյանը և

Նոյեմբերի 15-ին, ջեռուցման սեզոնի բացման օրը շահագործմանն հանձնվեցին հիմնական և միջնակարգ դպրոցների կաթսայատները: Դպրոցներում ջեռուցում էր անցկացվել Ազգային Ժողովի պատգամով Առաքել Մովսիսյանի հովանավորությամբ:


Մշակույթի տանը բազմիցս անցկացվում են համերգային միջոցառումներ, որտեղ իրենց տաղանդն են ներկայացնում և մ.թ. համայնքի մշակույթի տների և արվեստի դպրոցի սաները: Նաև հրավիրվում են արվեստագետներ դասից արգչուհի Լուսինե Մկրտչյան, ասմունքող Նաիրա Զուրաբյան:

Տարեմուտին Մշակույթի տուն էին հրավիրվել մուլտ. հերոսներ, աճպարարներ, կենդանավարժներ. ծալրածուներ: Միջոցառմանը մասնակցեցին Փայաքալի և Թաիրովի մանկապարտեզի սաները. Դպրոցների ստաջներն դասարանցիները: Բոլոր կրեխաները ստացան ամանոլոյս տապրակներ:

Նոյեմբերի 10-ին 22 Փոխվարչապետի, 22 Տարածքային կառավարման նախարարի և Հայաստանի Համայնքների Միության գործադիր տնօրենի կողմից համայնքը պարգևատրվեց հավաստագրով, որպես 2013 թվականի տարվա լավագույն մշակութային համայնք:

Չնայած վերնշված ձեռքերումների ունենք նաև հրատապ չունված խնդիրներ, դրանք են.

Թաիրով գյուղի բազմաբնակարան շենքերի կոյուղագծերի կառուցում, համայնքի գիշերային լուսավորության անցկացումը, փողոցների ապօրտաձեռնված վերանորոգումը, համայնքի լրիվ գազաֆիկացումը, գյուղատնտեսական աշխատանքների խթանման համար անհրաժեշտ գյուղ տեխնիկայի ավելայություն:



20012014p.